

Լիլիթ Զաքարյան

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ,

lilitzakaryan66@gmail.com

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԾՈՒՐՋ ԲՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՀՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ (1990–1995 թթ.)*

Հիմնաբառեր. Սահմանադրություն, նախագահական, խորհրդարանական հանրապետություն, Գերագույն խորհուրդ, խմբակցություններ

Ներածություն

1988 թ. սկսված Ղարաբաղյան շարժումը փոխակերպեց հայ հասարակության տասնամյակներով ձևավորված մտածելակերպը, ձգտումները և նպատակները: Սկզբնական շրջանում շարժման ղեկավարների մոտ կարծիք կար, որ ԽՍՀՄ Վերակառուցման քաղաքականության պայմաններում հնարավոր է վերականգնել պատմական արդարությունը և ԼՂԻՄ-ը՝ պատմական Արցախը, վերամիավորել մայր Հայաստանի հետ: Շարժման սկզբում անկախականների առաջարկները չէին ընդունվում հայ հասարակության կողմից և խոչընդոտ էին համարվում Ղարաբաղյան հարցի լուծման համար:

Սուսցայիթի ողբերգությունից և դրան հաջորդած Ադրբեյջանական ԽՍՀ-ում այլ բռնությունների ու հայերի տեղահանություններից հետո հասարակական գիտակցության մեջ առաջացավ արժեքային ճեղքում. փլուզվեց ԽՍՀՄ-ի՝ որպես անվտանգության երաշխավորի առասպելը, և սկսվեց անկախության համար պայքարը: 1989–1990 թթ. շարժման կենտրոնը աստիճանաբար տեղափոխվեց հրապարակներից ու փողոցներից ՀԽՍՀ Գերագույն խորհուրդ՝ ձևավոխելով պայքարի ձևերն ու քաղաքական առճակատման տրամաբանությունը:

1990 թ. հուլիսին իր աշխատանքը սկսեց ՀԽՍՀ տասներկուերորդ գումարման Գերագույն խորհուրդը, որն Անկախության հռչակագրի ընդունումից հետո դարձավ Հայաստանի Հանրապետության առաջին գումարման Գերագույն խորհուրդ: Նոր Սահմանադրության հարցը բարձրացվեց դեռևս Հռչակագրի քննարկումների շրջանում: Հռչակագրում նշվեց, որ այն պետք է դառնա ՀՀ Սահմանադրության մշակման հիմք: Ավելին՝ փաստաթղթի քննարկման ընթացքում, չնայած այն հանգամանքին, որ Հայաստանը դեռևս ԽՍՀՄ կազմում էր, պատգամավորներն արդեն ձևակերպում էին ապագա սահմանադրության կարևոր սկզբունքները:

* Ստացվել է 24.07.2025 թ., ուղարկվել է գրայնություն՝ 21.10.2025 թ., ընդունվել է տպագրության՝ 09.12.2025 թ.:

Անկախության հռչակագրի ընդունումը և ԽՍՀՄ փլուզումը նոր իրականություն ձևավորեցին, և թվում էր, թե առաջնահերթ քայլը պետք է լիներ երկրի հիմնական օրենքի՝ Սահմանադրության մշակումը: Սակայն գործընթացը երկարաձգվեց և ավարտին հասավ միայն հինգ տարի անց՝ 1995 թվականին:

Սահմանադրության մշակման ընթացակարգի, դրանում ազգայնական և ազատական խոսույթների արտահայտման հարցերի շուրջ առիթ ենք ունեցել գրել այլ հետազոտություններում (Զաքարյան 2024, Закарян 2025):

Հողվածի նպատակն է վերլուծել ՀՀ Գերագույն խորհրդում Սահմանադրության մշակման ընթացքը՝ այն դիտարկելով որպես քաղաքական և գաղափարական պայքարի արտահայտություն: Հետազոտությունը նպատակ ունի բացահայտել, թե ինչպես սահմանադրական գործընթացի շուրջ ծավալված բանավեճերը ձևավորեցին անկախ Հայաստանի քաղաքական համակարգը:

Հետազոտության խնդիրներն են.

1. Բացահայտել 1990–1995 թթ. Գերագույն խորհրդում ձևավորված քաղաքական միջավայրը և այն նախադրյալները, որոնք ներազդեցին Սահմանադրության մշակման վրա:
2. Ներկայացնել և վերլուծել Սահմանադրության ընդունման ժամկետների, ընթացակարգերի և դրանց շուրջ առաջացած քաղաքական ու գաղափարական տարաձայնությունները:
3. Համադրել Գերագույն խորհրդի տարբեր խմբակցությունների և քաղաքական հոսանքների դիրքորոշումները կառավարման համակարգի՝ նախագահական կամ խորհրդարանական մոդելի ընտրության հարցում, զուգորդելով դրանք գիտական գրականության մեջ առկա հետկոմունիստական երկրների գործընթացների վերլուծությանը:

Մեթոդաբանություն և աղբյուրներ.

Հետազոտությունը հիմնված է պատմաքաղաքական և համեմատական վերլուծության մեթոդների վրա: Սահմանադրության մշակման գործընթացը դիտարկվել է Գերագույն խորհրդում քննարկումների բովանդակային վերլուծության հիման վրա՝ գաղափարական-քաղաքական հարթություններում:

Հիմնական աղբյուրներն են Հայաստանի ազգային արխիվի գործերը, որոնց մեծ մասը առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ, ինչպես նաև ժամանակակից քաղաքական գործիչների հրապարակումները, թեմային վերաբերող ուսումնասիրությունները: Համադրությունն ապահովելու նպատակով առանձին ուսումնասիրության նյութ են դարձել օտարերկյա հայտնի հեղինակների հետազոտությունները, որոնցում քննարկել է կառավարման համակարգերի ձևավորումը հետկոմունիստական պետություններում:

Վերոնշյալ աղբյուրների համադրությունը հնարավորություն է տվել վերլուծել սահմանադրական գործընթացը որպես քաղաքական և գաղափարական պայքարի դրսևորում՝ անկախ պետականության ինստիտուցիոնալ կայացման համատեքստում:

Սահմանադրության մշակման մեկնարկը և քաղաքական իրավիճակը Գերագույն խորհրդում

1990 թ. նոյեմբերի 5-ին ՀՀ Գերագույն խորհրդի որոշմամբ ստեղծվեց սահմանադրության մշակման հանձնաժողով, որի նպատակն էր ՀՀ անկախության հռչակագրին համապատասխան նոր սահմանադրության նախագծի ստեղծումը (ՀԱԱ, ֆ. 207, ց. 62, գ. 19, 80–82): Հանձնաժողովի նախագահ դարձավ ՀՀ ԳԽ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը: Հանձնաժողովի կազմի շուրջ 65%-ը պատգամավորներ էին: Հանձնաժողովի կազմում ընդգրկվել էին նաև իրավագիտության և հասարակագիտության ոլորտի հեղինակավոր մասնագետները:

Հանձնաժողովի անդամներն էին.

1. Ավագյան Գրիգորը, ՀՀ ժողովրդական պատգամավոր, ԵԺՏԻ ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱ թղթակից անդամ
2. Բարսեղյան Տարիելը, ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
3. Գևորգյան Արտավազը, ՀՀ դատախազ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
4. Գևորգյան Համլետը, ՀՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի բաժնի վարիչ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
5. Եզոբյան Էդուարդը, ՀՀ ԳԽ անկախ պետականության հաստատման և ազգային քաղաքականության հարցերի հանձնաժողովի նախագահի տեղակալ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու
6. Զուռնայան Վարդանը, ՀՀ ԳԽ իրավական հարցերի հանձնաժողովի անդամ
7. Խաչատրյան Հրանտը, ՀՀ ժողովրդական պատգամավոր, «Արարատ» Հայկական արտադրական միավորման «Հատիս» ինժեներաարտադրական կենտրոնի բյուրոյի պետ
8. Խաչատրյան Միելը, փաստաբան, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
9. Հովհաննիսյան Վոլոդյան, ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու
10. Մովսիսյան Յուրին, ՀՀ ԳԽ տնտեսական ինքնուրույնության և տնտեսության զարգացման հարցերի հանձնաժողովի նախագահ
11. Նավասարդյան Աշոտը, ՀՀ ժողովրդական պատգամավոր, «Լիցք» կոոպերատիվի էլեկտրիկ
12. Ոսկանյան Աշոտը, ՀՀ ԳԽ մանդատային և էթիկայի հարցերի հանձնաժողովի նախագահ
13. Պապայան Ռաֆայելը, ՀՀ ԳԽ մարդու իրավունքների և ազգությունների հարցերի հանձնաժողովի նախագահ
14. Պետրոսյան Ռաֆիկը, ՀՀ ժողովրդական պատգամավոր, ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի դեկան, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

15. Մադոյան Արշակը, ՀՀ ԳԻՏ տեղական ինքնակառավարման հարցերի հանձնաժողովի անդամ
16. Սահակյան Արան, ՀՀ ԳԻՏ քարտուղար
17. Մարգարյան Յուրին, ՀՀ ժողովրդական պատգամավոր, Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ռեկտոր, ՀՀ ԳԱ թղթակից անդամ
18. Ստեփանյան Վահեն, ՀՀ արդարադատության նախարար, իրավաբանական գիտությունների դոկտոր
19. Քոչարյան Շավարշը, ՀՀ ԳԻՏ արտաքին հարաբերությունների հարցերի հանձնաժողովի նախագահի տեղակալ:

Հանձնաժողովի առջև դրվել էր ևս մեկ կարևոր խնդիր՝ մինչև նոր սահմանադրության նախագծի մշակումը վերանայել և, անհրաժեշտության դեպքում, Գերագույն խորհրդին առաջարկել փոփոխություններ Հայկական ԽՍՀ գործող սահմանադրության այն դրույթներում, որոնք հակասում էին 1990 թ. օգոստոսի 23-ի «Հայաստանի անկախության մասին» հռչակագրին (ՀԱԱ, ֆ. 207, ց. 62, գ. 20, 144):

Այս ժամանակաշրջանում ՀՀ-ում ձևավորվում էր յուրահատուկ իրավիճակ՝ Գերագույն խորհուրդը շարունակում էր պահպանել իր դիրքը որպես երկրի բարձրագույն մարմին, սակայն միաժամանակ սկսվեց նախագահի ինստիտուտի հաստատման գործընթացը: 1991 թ. հունիսի 25-ին ԳԻՏ-ի որոշմամբ հաստատվեց նախագահի պաշտոնը:

Նախագահական պաշտոնի հաստատման առաջարկով հանդես եկավ վարչապետ Վ. Մանուկյանը, որը հետագայում՝ սահմանադրության նախագծի քննարկման ժամանակ, նշում էր, որ նման որոշման պատճառը ԳԻՏ նախագահի և վարչապետի լիազորությունների անորոշ բաշխումն էր, ինչը բացառում էր հստակ պատասխանատվության կրումը: Մասնավորապես, 1990 թ. մայիսյան ողբերգական իրադարձությունները Շահումյանում և Գետաշենում վեր հանեցին կառավարման արդյունավետության և քաղաքական պատասխանատվության հիմնախնդիրը՝ «Պառլամենտականն ընդունեինք՝ վարչապետն էր պատասխան տալու, նախագահականի դեպքում՝ նախագահը» (Մանուկյան 2002, 177): Գերագույն խորհրդում քննարկումների ընթացքում նաև շեշտվում էր, որ նախագահի պաշտոնի հաստատումը կբարձրացնի երկրի օպերատիվ կառավարման հնարավորությունները, ինչը խիստ կարևոր էր Ադրբեյջանի հետ օրեցօր սաստկացող ռազմական բախումների հետևանքով:

Փաստորեն անկախության հռչակումից հետո Հայաստանը կառավարման պառլամենտական համակարգից անցում կատարեց նախագահականի: 1991 թ. հոկտեմբերի 16-ին Հայաստանի առաջին նախագահ ընտրվեց Լևոն Տեր-Պետրոսյանը: Երկրի ղեկավարությունը կառավարման նախագահական մոդելը նախընտրում էր նաև այն պատճառով, որ քաղաքական կուսակցությունները դեռևս ձևավորման փուլում էին (Մանուկյան 2002, 177; Տեր-Պետրոսյան 2006, 361): Թեպետ հետագայում Վ. Մանուկյանը նշում էր, որ այդ շրջանում ինքը դեռ չէր կողմնորոշվել՝ որ մոդելն է պատակահարմար և, պատահական չէ, որ Ազգային ժողովրդավարական միության (ԱԺՄ) հիմնադիր համագումարի ժամանակ, երբ

կուսակցությունը կողմ քվեարկեց պառլամենտական համակարգին, ինքը ձեռնպահ մնաց: Սակայն նախագահի պաշտոնի առաջարկն անելիս խոսք անգամ չէր գնում նախագահի անսահմանափակ լիազորությունների մասին (Մանուկյան 2002, 177): Հետագա տարիներին հզոր քաղաքական կուսակցությունների բացակայությունը շարունակում էր մտահոգություն առաջացնել, սակայն ԳԽ-ն որևէ գործնական քայլ չձեռնարկեց կուսակցական համակարգի կայացման ուղղությամբ, չնայած դա հնարավոր էր իրականացնել օրենսդրական հատուկ մեխանիզմների ներդրման միջոցով:

Նախագահական ինստիտուտի հաստատման պահից սկսած խորհրդարանի՝ որպես իշխանության բարձրագույն մարմնի դիրքերը զգալիորեն թուլացան: Լիազորությունների մի զգալի հատված փոխանցվեց նախագահին, ինչն առաջացրեց դժգոհություն աճող ընդդիմադիր ճակատում: 1993թ. փետրվարին Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ), Ռամկավար-ազատական կուսակցությունը (ՌԱԿ) և ԱԺՄ-ն ներկայացնող պատգամավորները հանդես եկան խորհրդարանական հանրապետություն ստեղծելու նախաձեռնությամբ (ՀԱԱ, ֆ. 207, ց. 62, գ. 271, 30): Նման նախաձեռնության պատճառը ԳԽ ընդդիմադիր թևի և նախագահի միջև խորացող հակասությունն էր՝ Արցախի ճակատագրի, ռազմական քաղաքականության, տնտեսական բարեփոխումների և սեփականաշնորհման, հայրենիք-Սփյուռք առնչության և այլ հիմնախնդիրների շուրջ:

Միաժամանակ յուրջ քննարկման առարկա դարձավ Սահմանադրության ընդունման ընթացակարգի հարցը: Քննարկվում էին ինչպես մշակման տարբերակները (ԳԽ սահմանադրական հանձնաժողովի միջոցով, թե՛ Սահմանադիր ժողովի), այնպես էլ ընդունման ընթացակարգերը՝ խորհրդարանի կողմից 2/3 ձայներով, թե՛ համաժողովրդական հանրաքվեի միջոցով:

1993 թ. ապրիլի 27-ին Սահմանադրության մշակման հետ կապված խնդիրների մասին Սահմանադրական հանձնաժողովի հաշվետվությունը ԳԽ-ում ներկայացրեց Վ.Ստեփանյանը: 2.5 տարվա ընթացքում անց էր կացվել 38 նիստ, այդ թվում՝ ընդլայնված և համատեղ: ԳԽ ներկայացվել էր սահմանադրության 7 նախագիծ: Հանձնաժողովը մշակել էր մեկ նախագիծ, որն ուղարկվել էր կարծիքի Ֆրանսիայի համալսարանի պրոֆեսոր Բերնարդ Միգանին, ԳՖ-ի սահմանադրական իրավունքի մասնագետներ՝ Կոզելին, Կոտսնայդերին, Նեսքոփեռին: ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտին առաջարկվել էր քննարկել այն ՌԴ գիտական կենտրոններում: (ՀԱԱ, ֆ. 207, ց. 62, գ. 292, 112): Հանդիպումներ էին կազմակերպվել Հայաստանի իրավաբանների միության անդամների, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի սահմանադրական իրավունքի մասնագետների հետ: Սահմանադրության նախագծի համաժողովրդական քննարկումը տևեց ինը ամիս (Խաչատրյան 1997, 23): Հանձնաժողովն ուսումնասիրել էր «700-ից ավելի առաջարկություններ պարունակող փաթեթը: Առաջարկություններով հանդես էին եկել 300-ից ավելի կազմակերպություններ, այդ թվում՝ ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտը, այլ ինստիտուտներ, Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, ինչպես նաև բազմաթիվ քաղաքացիներ» (Շուքրոյան 2022, 123):

Արդյունքում նախնական տարբերակում որոշ փոփոխություններ էին արվել: Այսպես, եղել են փոփոխություններ, որոնք ուղղված էին նախագահի լիազորությունների կրճատմանը: Սկզբնական տարբերակում գրված էր, որ միջազգային պայմանագրերը վավերացնում է ՀՀ նախագահը, փոփոխված տարբերակում՝ ԱԺ-ն: Հանձնաժողովը փոխեց «ՀՀ նախագահը պետության գլուխն է և ղեկավարում է գործադիր իշխանությունը» ձևակերպումը, գրելով՝ «ՀՀ նախագահը պետության բարձրագույն պաշտոնատար անձն է, նա ապահովում է պետական մարմինների սահմանադրական հավասարակշռությունը և ներդաշնակ գործունեությունը» (ՀԱԱ, ֆ. 207, ց. 62, գ. 292, 114): Նախատեսվեց, որ ՀՀ նախագահին իմպիչմենտի ենթարկելու դեպքում եզրակացություն պետք է տա ոչ թե Գերագույն դատարանը, այլ Սահմանադրական: Քննարկվել էին Սահմանադրության ընդունման 3 ճանապարհները՝ խորհրդարանի կողմից, համընդհանուր ընտրություններով ընտրված հատուկ մարմնի կողմից և հանրաքվեով (ՀԱԱ, ֆ. 207, ց. 62, գ. 292, 115): Պատգամավորների իշխանական թերը գոհ էր հանձնաժողովի աշխատանքից, ընդդիմադիրը՝ ոչ: Ընդդիմադիրները գտնում էին, որ հանձնաժողովի վրա մեծ ազդեցություն է գործում նախագահը: Քննարկվող հարցերի շուրջ ձևավորվեց խորքային քաղաքական-գաղափարական բևեռացում, որի արձագանքները շոշափելի եղան 1994 թ. կեսից և հատկապես 1995 թ. պառլամենտական ընտրությունների և սահմանադրական հանրաքվեի անցկացման ընթացքում:

Ե՞րբ և ինչպե՞ս ընդունել Սահմանադրությունը

Սահմանադրության ընդունման ժամկետն ու ընթացակարգը ԳԻՄ-ի առանցքային հարցերից էին: «Ազգային ինքնորոշում միավորման» կուսակցության (ԱԻՄ) նախագահ Պարույր Հայրիկյանը հետևողականորեն առաջ էր տանում Սահմանադիր ժողովի կողմից սահմանադրության մշակման գաղափարը: Նա առաջարկում էր ՀՀ նախագահին ընտրել մեկ տարով, կազմակերպել Սահմանադիր ժողովի ընտրություններ՝ ակնկալելով, որ այն արագ կմշակի Սահմանադրության նախագիծը, քանի որ զբաղված կլինի միայն այդ հարցով (Զաքարեան 2024, 232): Չնայած 1991 թ. այս նախաձեռնությունը մերժվեց, հետագայում նույն մոտեցումը պաշտպանեցին վեց կուսակցություններ՝ ԱԺՄ-ն, ՀՅԴ-ն, «Սահմանադրական իրավունք միություն» կուսակցությունը (ՄԻՄ), Հայաստանի հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ), Քրիստոնյա ժողովրդական միությունը և ԱԻՄ-ը (ՀԱԱ, ֆ. 207, ց. 62, գ. 271, 144):

Սահմանադիր ժողովի գաղափարը հիմնավորվում էր քաղաքական իրադրության փոփոխությամբ: 1990 թ. ձևավորված Գերագույն խորհուրդը ընտրվել էր այն ժամանակ, երբ ընդդիմադիր ուժերը համախմբվել էին Հայոց համազգային շարժման (ՀՀՇ) շուրջ՝ ընդդեմ Հայաստանի կոմունիստական կուսակցության (ՀԿԿ): Սակայն 1993 թ. դրությամբ քաղաքական դաշտը էապես փոփոխվել էր: «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո (1991 թ.) ստեղծվել էին նոր կուսակցություններ, իսկ ԳԻՄ-ում շարունակաբար ձևավորվում էին նոր խմբակցություններ ու պատգամավորական խմբեր:

1992–1995 թթ. ընթացքում ԳԻՄ-ում արձանագրվեց խմբակցությունների և պատգամավորական խմբերի հետևյալ շարժընթացը.

- **1992 թ. նոյեմբերի 24-ին ԳԻՄ-ում** կար 4 խմբակցություն (ՀՀՇ, ՀՌԱԿ, ՀՅԴ, Ագրարային ժողովրդավարական կուսակցություն (ԱԺԿ)) և 5 պատգամավորական խումբ («Արցախ», «Անկախ ժողովրդավարներ», «Ազգային ժողովրդավարներ», «Ազատ խորհրդականներ», «Ագրարային») (ՀԱԱ, ֆ. 207, ց. 62, գ. 271, 144),
- **1993 թ. հունիսի 15-ին՝** 5 խմբակցություն (ՀՀՇ, ՀԿԿ, ՀՌԱԿ, ՀՅԴ, ԱԺԿ) և 3 պատգամավորական խումբ («Արցախ», «Ազատ խորհրդականներ», «Ազգային ժողովրդավարներ») (ՀԱԱ, ֆ. 207, ց. 64, գ. 78, 162),
- **1994 թ. հուլիսի 1-ին՝** 4 խմբակցություն (ՀՀՇ, ՀԿԿ, ՀՅԴ, ՀՌԱԿ) և 3 պատգամավորական խումբ («Արցախ», «Ազատ խորհրդարանականներ», «Ազգային ժողովրդավարներ») (ՀԱԱ, ֆ. 207, ց. 64, գ. 76, 145–148),
- **1995 թ. մայիսի 1-ին՝** 2 խմբակցություն (ՀՀՇ, ՀԿԿ) և 7 պատգամավորական խումբ («Հանրապետություն», ՀՅԴ, «Արցախ», «Ազատ խորհրդարանականներ», «Ազգային ժողովրդավարներ», «Լիբերալ-դեմոկրատական», «Ազգային առաջադիմություն») (ՀԱԱ, ֆ. 207, ց. 64, գ. 76, 123–124):

Այս փոփոխական պատկերը հիմք էր այն տեսակետի համար, որ Սահմանադիր ժողովը՝ որպես նորընտիր մարմին, ավելի լիարժեք կարտահայտի քաղաքական ուժերի փոխված հարաբերակցությունը:

1993 թ. մարտի 8-ին, 91 պատգամավորների նախաձեռնությամբ Սահմանադիր ժողովի մասին մի քանի օրենքների նախագծերի քննարկման առաջարկ ներկայացվեց (ՀԱԱ, ֆ. 207, ց. 62, գ. 277, 12), սակայն քննարկումը ծավալվեց ոչ թե նախագծի շուրջ, այլ Սահմանադիր ժողովի անհրաժեշտության:

Իշխող ուժի՝ ՀՀՇ-ի, դիրքորոշումն այն էր, որ սահմանադրությունը պետք է մշակի ԳԻՄ սահմանադրական հանձնաժողովը, քննարկվի ԳԻՄ-ում և ապա ներկայացվի համաժողովրդական հանրաքվեի: Ըստ ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի՝ ընդդիմադիրների կողմից Սահմանադիր ժողովի պահանջը պայմանավորված էր այն ակնկալիքով, որ նոր ընտրությունների արդյունքում քաղաքական ուժերի հարաբերակցությունը կփոխվի՝ հօգուտ ընդդիմության: Նա մտահոգություն էր հայտնում, որ Սահմանադիր ժողովի ինքնուրույն գործելակերպը կարող է հակասություն առաջացնել ԳԻՄ-ի հետ՝ հիշեցնելով նախագահի ինստիտուտի հաստատումից հետո առաջացած քաղաքական բախումները: Ընդդիմադիրների կարծիքով, որքան շուտ ընդունվեր հանրապետության հիմնական օրենքը, այնքան լավ: Նրանք հույս ունեին, որ Սահմանադրությունը կսահմանազատի իշխանության 3 ճյուղերի լիազորությունները և բախումներ այլևս չեն լինի: Մինչդեռ ՀՀ նախագահի կարծիքով Հայաստանը դեռևս անցումային շրջանում էր և Սահմանադրության հապճեպ ընդունումը նպատակահարմար չէր: Նրա կարծիքով ԳԻՄ-ն պետք է ընդուներ տարբեր ոլորտները կարգավորող օրենքներ, որոնք հետագայում կդառնային Սահմանադրության առանձին բաժիններ: Դա նաև հնարավորություն կտար ընդունված այդ օրենքները (սեփականության, Հանրապետության Նախագահի,

Խորհրդարանի մասին, հասարակական-քաղաքական կազմակերպությունների և այլն) գործնականում կիրառել և ի հայտ եկած թերությունները շտկել՝ դրանով խուսափելով Սահմանադրության հաճախակի փոփոխություններից (Տեր-Պետրոսյան 2006, 286): Նա կողմնակից էր, որ սահմանադրությունը մշակի ԳԻՍ սահմանադրական հանձնաժողովը և ընդունվի համաժողովրդական հանրաքվեի միջոցով: Այդուհանդերձ, նա չէր բացառում նաև այլ՝ համադրական մոտեցումը, երբ Սահմանադրական հանձնաժողովի մշակած նախագիծը նախ կհաստատվեր խորհրդարանում և այնուհետև կներկայացվեր հանրաքվեի (Տեր-Պետրոսյան 2006, 363): Նա նույնիսկ գտնում էր, որ անհրաժեշտության դեպքում հնարավոր է հանրաքվեի դնել նաև այլընտրանքային նախագիծը՝ խորհրդարանային հանրապետության մոդելով: Այդ պարագայում, եթե ԳԻՍ հանձնաժողովի մշակած նախագիծը չընդունվեր, նա հրաժարական տալու պատրաստակամություն էր հայտնում: Նրա համոզմամբ՝ Սահմանադրությունը պետք է դառնար 1988 թ.-ից սկսված հայոց ազգային-ազատագրական շարժման տրամաբանական հանգրվանը (Տեր-Պետրոսյան 2006, 267):

ԳԻՍ-ում կային նաև չեզոք պատգամավորներ, որոնք սկզբունքորեն դեմ չլինելով Սահմանադիր ժողովի գաղափարին, գնահատելով երկրում սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակը, գազի և էլեկտրաէներգիայի պակասը, աղքատության աճը, սոցիալական բևեռացումը, քաղաքական հուսահատությունը, դրանք խոչընդոտ էին համարում Սահմանադիր ժողովի կազմակերպման համար: Օրինակ, հայտնի մտավորական, ԳԻՍ պատգամավոր Յու. Սարգսյանը գերադասելի էր համարում Սահմանադիր ժողովի միջոցով Սահմանադրության ընդունումը: Այն տեսականորեն ամենալավ տարբերակն էր համարում, եթե դա լիներ 3 տարի առաջ: Սակայն նա գտնում էր, որ նոր պայմաններում համատարած հիսապափությունն իշխանական մարմիններից կարող է դժվարացնել այլ մարմնի ստեղծումը (ՀԱԱ, ֆ. 207, ց. 62, գ. 362, 158):

Խորհրդարանական, թե՞ նախագահական հանրապետություն

Պառլամենտական, թե՛ նախագահական կառավարման համակարգերի ընտրության առջև են հայտնվել գրեթե այն բոլոր պետությունները, որոնք ընտրել են անկախության և ժողովրդավարության ուղին: Եվ պատահական չէ, որ 20-րդ դարի 70-ական թվականներից այս հարցի շուրջ ձևավորվել է գիտական խոսույթ: Հարցը քննարկվել է, ոչ այնքան պետության կառավարման արդյունավետության տեսանկյունից, այլ ժողովրդավարության կայացման: Սակայն այս հարցում ո՛չ քաղաքագետների, ո՛չ հետազոտողների շրջանում մինչ այժմ միասնական տեսակետ չի ձևավորվել:

Հետազոտություններից մեկում հեղինակները, ուսումնասիրելով 1974–2009 թթ. տարբեր պետությունների փորձը, ժողովրդավարության ռիսկերի տեսանկյունից, հետևություն են անում, որ նախագահական համակարգերում հաճախ դժվար է լինում վերահսկել նախագահի լիազորությունները, և որքան դրանք ընդլայնվում են, այնքան նվազում է ժողովրդավարության մակարդակը (Young Hun Kim 2015, 652): Պետությունները, չկարողանալով գտնել այդ հարցի պատասխանը, որպես կանոն ընտրել են, այսպես կոչված, կիսանախագահական համա-

կարգը, որը «նոր ժողովրդավարություններում տարածված ձև դարձավ» (Young Hun Kim 2015, 652): ԽՍՀՄ անկման և սոցիալիստական համակարգի փլուզումից հետո անկախացած երկրների 60%-ը նախընտրեց այդ կիսանախագահական մոդելը, 30%-ը՝ պառլամենտական և միայն 10%-ը՝ նախագահական (Young Hun Kim 2015, 652): Թվում էր՝ լուծումն արդեն գտնված է: Սակայն հետագայում պարզվեց, որ շատ դեպքերում «կիսանախագահությունը այլևս չի տարբերվում նախագահական համակարգից, ինչն էլ նվազեցնում է դրա արդյունավետությունը ժողովրդավարության տեսանկյունից» (Young Hun Kim 2015, 656): Շատ երկրներում նկատվել են միևնույն գործընթացները՝ կուսակցությունների քանակի աճ, թույլ ընդդիմություն, ճգնաժամային իրավիճակներ, գործադիր իշխանության կենտրոնացում նախագահի ձեռքում: Եթե հաշվի առնենք, որ պետականաշինությունը բարդ գործընթաց է և հանրապետությունները հաճախ հայտնվում են ճգնաժամային իրավիճակներում, նախագահը դառնում է «ազգային միասնության խորհրդանիշ»: Սակայն ճգնաժամի հաղթահարման անվան տակ հաճախ է գերազանցում սահմանադրական լիազորությունները, անհատականացնելով քաղաքական գործընթացը և նվազեցնելով հորիզոնական հաշվետվողականությունը (Young Hun Kim 2015, 655), ինչը հանդիսանում է նահանջ ժողովրդավարությունից: Հետազոտողների մի մասն էլ գտնում է, որ նորաստեղծ ժողովրդավարությունները շտապեցին հրաժարվել պառլամենտարիզմից, մինչդեռ այն կարող էր ապահովել ավելի կայուն ժողովրդավարություն (Ishiyama & Velten 1998, 218): Նրանց կարծիքով ուժեղ նախագահական իշխանությունը նպաստում է գաղափարական բևեռացմանը: Այդ համակարգերում հաճախ պարզ չէ՝ նախագահին, թե՛ պառլամենտի միջոցով է արտահայտվում ժողովրդի կամքը: Արդյունքում նախագահը հակված է մարտահրավեր նետելու իր հակառակորդներին, ինչը կարող է հանգեցնել պայթյունավտանգ սոցիալ-քաղաքական բախումների: Ընդդիմությունը, պարտվելով ընտրություններում, չի ունենում գործելու այլ լեգիտիմ հարթակ և դժգոհությունը տեղափոխում է փողոցներ (Ishiyama & Velten 1998, 219): Իշխանության կենտրոնացումը մեկ մարդու ձեռքին մեծ գայթակղություն է առանձին նախագահների համար, որոնք սկսում են անտեսել իրենց իշխանության սահմանադրական սահմանափակումները (Ishiyama & Velten 1998, 220):

Նախագահական կառավարման կողմնակիցները պնդում են, որ նորաստեղծ պետություններում լայնածավալ տնտեսական և քաղաքական բարեփոխումների իրականացումը նպաստում է իշխանության կենտրոնացմանը նախագահի ձեռքում: Այդ բարեփոխումները դժվար է իրականացնել խորհրդարանական համակարգերում՝ որոշումների ընդունման ժամանակատարության պատճառով (Ishiyama & Velten 1998, 221): Նրանց մի մասն առաջարկում է ուշադրությունը սևեռել ոչ թե կառավարման ձևի, այլ ընտրական գործընթացների վրա (Ishiyama & Velten 1998, 221):

Հետաքրքիր է, որ այդ նույն բանավեճը, նույն պատճառաբանություններով ծավալվեց ՀՀ ԳԻՄ-ում: ՀՀԸ-ն և նրա դաշնակիցները պաշտպանում էին նախագահական մոդելը, ընդդիմադիր «Վեյցակը»՝ խորհրդարանականը:

ՀՀԾ-ի դիրքորոշումը բազմիցս արտահայտել է ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը: Նա դա համարում էր ոչ այնքան իրավական, որքան քաղաքական խնդիր՝ օրենսդիր և գործադիր իշխանությունների միջև մղվող պայքարի արտահայտություն: Անդրադառնալով խորհրդային պառլամենտական համակարգին նա նշում էր, որ այն միակուսակցականության պայմաններում արդյունավետ է եղել: Ըստ նրա՝ խորհրդարանական համակարգը կարող է արդյունավետ գործել «լրջորեն ձևավորված բազմակուսակցական հասարակություններում, երբ կան մի քանի ծանրակշիռ կուսակցություններ, որոնք հեռու են արկածախնդրությունից, ունեն պատմականորեն ձևավորված լուրջ քաղաքական միտք, և յուրաքանչյուր պահի որևէ կուսակցություն կարող է իր վրա վերցնել երկրի ղեկավարման պարտականությունը» (Տեր-Պետրոսյան 2006, 361): Նա պնդում էր, որ ժողովրդավարության իրական չափանիշը ոչ թե պառլամենտական կամ նախագահական լինելն է, այլ ազատ ընտրությունների անցկացումը: Երկու կողմերի հիմնական կռվախնձորը կառավարություն ձևավորելու լիազորության պատկանելությունն էր: Նախագահական համակարգում այն վերապահվում է նախագահին, իսկ պառլամենտականում՝ խորհրդարանին: Լևոն Տեր-Պետրոսյանը պնդում էր, որ առանց կայացած քաղաքական դաշտի պառլամենտարիզմը կարող է հանգեցնել պետական անկայունության, հեղաշրջումների, բռնատիրության կամ արտաքին միջամտությունների (Տեր-Պետրոսյան 2006, 420):

«Վեցյակի» կարծիքով նախագահական համակարգը Հայաստանում արդեն իսկ դրսևորել էր բացասական կողմերը, հետևաբար անհրաժեշտ էր ընտրել խորհրդարանականը (ՀԱԱ, ֆ. 207, ց. 62, գ. 272, 67): Սահմանադրության նրանց նախագիծը, ըստ հեղինակների, հիմնված էր ինչպես համամարդկային արժեքների, այնպես էլ ազգային առանձնահատկությունների վրա: Նրանք ուսումնասիրել էին Գերմանիայի, Իտալիայի, Իսպանիայի, Ճապոնիայի հետբռնատիրական պետականաշինության փորձը և պնդում էին, որ հենց խորհրդարանական մոդելն է ամենաարդյունավետ միջոցն ավտորիտարիզմից խուսափելու համար (ՀԱԱ, ֆ. 207, ց. 62, գ. 374, 172):

Այդ երկու նախագծերի վերաբերյալ քննարկումը ԳԽ-ում շարունակվեց 1994–1995 թվականներին: Մասնագետները նշում էին, որ երկու նախագծում էլ թերի էին ներկայացված իշխանության ճյուղերի հավասարակշռման մեխանիզմները: Հայտնի իրավագետ Ռ. Պետրոսյանը վերհանելով երկու նախագծերի թերությունները, առաջարկում էր ստեղծել սահմանադրական ասամբլեա, որի կազմում 10 մարդ կընտրեր ԳԽ-ն, 10 մարդ կնշանակեր ՀՀ նախագահը: Այդ դեպքում նախագահը, կուսակցությունները, ԳԽ-ն հնարավորություն կունենային առաջադրել պետականագետներ, քաղաքագետներ, տնտեսագետներ: Այդ խումբը պետք է 2 տեքստերը միավորեր: Ասամբլեան կազմված կլիներ մոտ 30 հոգուց և նրա կազմում ներկայացված կլինեին խորհրդարանական կուսակցությունների ներկայացուցիչներ (ՀԱԱ, ֆ. 207, ց. 62, գ. 363, 104): «Սահմանադրական փակուղու» հաղթահարման միակ ելքը դիտվում էր իշխանության և ընդդիմության միջև փոխզիջումը (ՀԱԱ, ֆ. 207, ց. 62, գ. 364, 12):

1995 թ. մայիսի 2-ին Վլադիմիր Նազարյանը Սահմանադրական հանձնաժողովի անունից ներկայացրեց Սահմանադրության լրամշակված նախագիծը (ՀԱԱ, ֆ. 207, ց. 62, գ. 443, 45): Նշվեց, որ աշխատանքը կատարվել է իրավաբանական և պետականագիտական խորացված քննարկումների հիման վրա: 1994 թ. հունիսի կեսից սահմանադրական հանձնաժողովի կազմը համալրվել էր և բոլոր նախագծերի դրական կողմերի հաշվառմամբ կազմվել միասնական նախագիծը: Հանձնաժողովի նիստերին ներկա են եղել ԳԻՄ բազմաթիվ պատգամավորներ, գործունեությունը լուսաբանվել է ԶԼՄ միջոցով:

Վ. Նազարյանը ներկայացրեց 2 հիմնական տարբերակների վիճահարույց դրույթները և Սահմանադրության նախագծի վերջնական տարբերակում դրանց շուրջ գտած կոնսենսուսը: Ամենավիճահարույց հարցերից է եղել ազգային հիմնախնդիրների արտացոլումը Սահմանադրության տեքստում՝ Հայ դատը, Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման, դատապարտման ու դրա հետևանքների վերացման պահանջի արտացոլումը: Ի վերջո այդ տեսակետի կողմնակիցները հաջողության հասան և այդպիսով ԱՄՆ սահմանադրության ոճով սկսվող՝ «Մենք Հայաստանի Հանրապետության ժողովուրդը» արտահայտությունը փոխարինվեց՝ «Հայ ժողովուրդը հիմք ընդունելով Հայաստանի անկախության մասին Հռչակագրում հիմնարար սկզբունքներն ու համագգային նպատակները» դրույթով: Պետությունը պարտավորվում էր նպաստել այլ պետություններում գտնվող հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը, ազգությամբ հայերը ՀՀ քաղաքացիությունը պետք է ձեռք բերեին պարզեցված կարգով: Այսինքն, Սահմանադրության մեջ «Վեցյակի» նախագծի ազգայնական դրույթները ապահովվեցին Հռչակագրի սկզբունքների և համագգային նպատակների վրա հղմամբ:

Վ. Նազարյանը ներկայացրեց նաև հաջորդ խոշոր վիճահարույց հարցը՝ պետության կառավարման մոդելը՝ խորհրդարանական թե՛ նախագահական, նշելով, որ հանձնաժողովը որոշեց այդ հարցը փոխզիջումներով լուծել՝ փորձ անելով ուժեղացնել իշխանության թևերի հակակշիռների մեխանիզմները: Այսպես, ՀՀ նախագահը նշանակելու էր վարչապետին, նրա առաջարկով՝ կառավարության անդամներին, ինչը նախագահական համակարգի վկայականն է, բայց կառավարությունը պետք է ԱԺ-ի հավանությանը ներկայացներ իր գործունեության ծրագիրը, դրանով ԱԺ-ում դնելով իր վստահության հարցը: Եթե Ազգային ժողովը այն չընդուներ, վարչապետը պետք է հրաժարական տար և ՀՀ նախագահը 20-օրյա ժամկետում պետք է ընդուներ հրաժարականը և նշանակեր նոր վարչապետ:

Սկզբնական տարբերակում գրված էր, որ միջազգային պայմանագրերը վավերացնելու էր ՀՀ նախագահը, փոխված տարբերակում՝ Ազգային ժողովը վավերացնելու էր, Նախագահը՝ ստորագրելու: Հանձնաժողովը հանեց «ՀՀ նախագահը պետության գլուխն է և ղեկավարում է գործադիր իշխանությունը» ձևակերպումը, գրելով՝ «Հայաստանի Հանրապետության Նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը, ապահովում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը»: Նախատեսվեց, որ ՀՀ նախագահին ինպիսի մեխանիզմներով ենթարկելու դեպքում եզրակացություն պետք է տա ոչ թե Գերագույն դատարանը, այլ Սահմանադրականը (Զաքարյան 2024, 28–29):

1995 թ. մայիսի 12-ին ՀՀ ԳԽ-ի որոշմամբ հավանություն տրվեց Սահմանադրության նախագծին: 1995 թ. հուլիսի 5-ին անցկացվեց հանրաքվեն և Ազգային ժողովի ընտրությունները: Ըստ պաշտոնական տվյալների՝ Սահմանադրությանը կողմ էր քվեարկել մասնակիցների 68.04% (Մինասյան 2013, 140), ինչը կազմում էր ընտրողների ընդհանուր թվի 37.83%-ը: Նոր Սահմանադրությամբ Հայաստանում հաստատվեց կիսանախագահական կառավարման մոդելը:

Եզրակացություն

ՀՀ Սահմանադրության մշակման գործընթացը և դրա ընդունումը պետականաշինության կարևոր փուլերից է: Սահմանադրության շուրջ քննարկումները բացահայտեցին խորքային գաղափարական տարաձայնություններ կառավարման մոդելի, իշխանության բաշխման և լեգիտիմության աղբյուրների հարցում: Այս պայքարում ակնառու էին երկու հիմնական դիրքորոշումներ՝ մի կողմից՝ նախագահական կառավարման մոդելի կողմնակիցները, որոնք շեշտադրում էին կենտրոնացվածության անհրաժեշտությունը հետպատերազմյա երկրում առկա ճգնաժամային պայմաններում, մյուս կողմից՝ խորհրդարանական համակարգի ջատագովները, ովքեր համարում էին այն ուժերի հավասարակշռության և ժողովրդավարական վերահսկողության մեխանիզմներով հագեցված համակարգ: Արտաքուստ հակադիր դիրքորոշումները՝ ուժեղ նախագահի գաղափարից մինչև պառլամենտի գերակայության պաշտպանությունը, պայմանավորված էին ինչպես իրավիճակային գործոններով (անկայունություն, պատերազմական վիճակ, ինստիտուցիոնալ անորոշություն), այնպես էլ քաղաքական ուժերի և դերակատարների աշխարհայացքային և ռազմավարական տարբեր պատկերացումներով: Սահմանադրության մշակման ձևի հարցում ևս առկա էին տարբեր մոտեցումներ՝ Սահմանադիր ժողովի ընտրության և հանրաքվեի ճանապարհով հաստատման կողմնակիցներից մինչև Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողովի կողմից փաստաթուղթը մշակելու և նույն խորհրդարանական մեխանիզմներով հաստատելու առաջարկներ: Ի վերջո Սահմանադրության նախագիծը մշակվեց ՀՀ ԳԽ սահմանադրական հանձնաժողովի կողմից և ընդունվեց հանրաքվեի միջոցով:

Չնայած տարակարծություններին և որոշակի անվստահության մթնոլորտին, Սահմանադրության ստեղծման գործընթացը քաղաքական դաշտի աստիճանական և գաղափարական խոսույթների ձևավորման, սահմանադրականության մշակույթի առաջացման կարևոր փուլերից է: Բնական է, որ այդ գործընթացը պետք է ուղեկցվեր ընդդիմություն-իշխանություն լարվածությամբ, երբեմն լուրջ բախումներով: Ըստ էության պետության կառավարման առաջարկվող 2 մոդելները շատ տարբեր էին և կիսանախագահական համակարգը, ինչպես և այլ պետություններում ոսկյա միջինը գտնելու տարբերակ էր: Դրական է, որ ի վերջո Սահմանադրությունը պետք է ընդունվեր համաժողովրդական հանրաքվեով: Սակայն 1995 թ. ԱԺ ընտրությունների գործընթացը ուղեկցվեց լուրջ ընդդիմադիր բողոքների, հասարակական պառակտման և վստահության անկման ալիքներով, ինչը հարցականի տակ դրեց նաև հանրաքվեի արդյունքները: Ինչպես նշում է հե-

տագոտողներից մեկը գործնականում այդ համակարգը նպաստեց գործադիր իշխանության կենտրոնացմանը, սահմանադրական բանակցությունների ձախողմանը և «ավտոկրատիայի աստիճանական վերածննդին՝ նախագահական իշխանության ամրապնդման և ընտրական գործընթացների մանիպուլյացիայի միջոցով» (Andersen 2019, 657): Ըստ էության Հայաստանի երրորդ հանրապետության հետագա պատմությունը հաստատեց արևմտյան հետագոտողների այն կարծիքը, որ ժողովրդավարությունը այդքան էլ կապված չէ պետության կառավարման համակարգից և որ երկուսի դեպքում էլ թույլ կուսակցական համակարգի պայմաններում կարող է տեղի ունենալ սահմանադրական լիազորությունների գերազանցում և քաղաքական գործընթացի անհատականացում:

Այնուամենայնիվ, 1990–1995 թթ. Գերագույն խորհրդի աշխատանքը Սահմանադրության մշակման ուղղությամբ կարելի է դիտարկել որպես անցումային շրջանի գաղափարական և ինստիտուցիոնալ փորձարկումների խտացված արտահայտություն, որն առաջին անգամ անկախ Հայաստանի պետականության մեջ ձևավորեց սահմանադրական մտածողության և քաղաքական բանավեճի շրջանակը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Օգտագործված սկզբնաղբյուրներ

Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 207, ց. 62, գ. 19; 20; 271; 272; 277; 292; 362; 363; 364; 374; 443:

Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 207, ց. 62, գ. 76; 78:

Օգտագործված ուսումնասիրություններ

ԶԿԲՐԵՄՆ 2024 – Զաքարյան Լ., Պետականաշինության հիմնախնդիրները ՀՀ Գերագույն խորհրդում 1990–1995-ին, *Հայկազեան հայագիտական հանդես*, Բեյրութ, Հայկազեան համալսարանի հրատարակչություն, 2024, № 44/2, 221–252:

ԽԱԶՍՏԻՅԱՆ 1997 – Խաչատրյան Հ., *Հայաստանի Հանրապետության առաջին սահմանադրությունը*, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 1997:

ՄԱՆՈՒԿՅԱՆ 2002 – Մանուկյան Վ., *Հայկական երազանքը գոյարևման փակուղում. էությունը և հողվածների ժողովածու*, Երևան, «Վ.Ի.Վ. ԱՅՍՕՐ ԵՎ ՎԱՂԸ» հրատարակչություն, 2002: <https://vazgenmanukyan.am/wp-content/uploads/2021/12/Armenian-Dream-in-the-Deadlock-of-Survival.pdf>

ՄԻՆԱՍՅԱՆ 2013 – Մինասյան Է., *Հայաստանի Երրորդ Հանրապետության պայմանություն*, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2013:

ՇՈՒՔՈՒՐՅԱՆ 2022 – Շուքրյան Ա., Սահմանադրական զարգացումը Հայաստանի պետականության պայմաններում (առաջին, երկրորդ և երրորդ հանրապետությունների ժամանակաշրջանում), *Հասարակագիտական միտքը արդի ժամանակաշրջանում*, Երևան, «Լիմուշ» հրատարակչություն, 2022, Գիրք XII, 116–128:

ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ 2006 – Տեր-Պետրոսյան Լ., *Ընտրանի. էությունը, հողվածներ, հարցադրույցներ*, Երևան, Հայաստանի Հանրապետության Առաջին Նախագահի արխիվ, 2006:

ЗАКАРЯН 2025 – Закарян Л., Идеологическая борьба в Верховном Совете Армении в процессе разработки Конституции 1995 года: к вопросу о политическом контексте и ценностных ориентирах, *Регион и мир*, Ереван, Общественный институт политических и социальных исследований Черноморско-Каспийского региона, 2025, №4, 48–53.

- ANDERSEN 2019 – Andersen D., Comparative Politics, Comparative Democratization and Democratic Backsliding: The Case for a Historical-Institutional Approach, *Comparative Politics*, City University of New York, 2019, Vol. 51, No. 4, 645–663.
- ISHIYAMA AND VELTEN 1998 – Ishiyama J.T. and Velten M., Presidential Power and Democratic Development in Post-Communist Politics, *Communist and Post-Communist Studies*, University of California Press, 1998, Vol. 31, No. 3, 217–233.
- YOUNG HUN KIM 2015 – Young Hun Kim, A Troubled Marriage? Divided Minority Government, Cohabitation, Presidential Powers, President-Parliamentarism and Semi-Presidentialism, *Government and Opposition*, Cambridge University Press, 2015, Vol. 50, No. 4, 652–681. <https://doi:10.1017/gov.2014.23>

ՋԱՊԱՎՈՒՄՆԵՐ

- ԱԺԿ – Ազրաբային ժողովրդավարական կուսակցություն
 ԱԺՄ – Ազգային ժողովրդավարական միություն
 ԱԻՄ – Ազգային ինքնորոշում միավորում
 ԳԻՍ – Գերագույն խորհուրդ
 ՀԱԱ – Հայաստանի ազգային արխիվ
 ՀԿԿ – Հայաստանի կոմունիստական կուսակցության
 ՀՀԿ – Հայաստանի հանրապետական կուսակցություն
 ՀՀՇ – Հայոց համազգային շարժման
 ՀՅԴ – Հայ հեղափոխական դաշնակցություն
 ՌԱԿ – Ռամկավար-ազատական կուսակցություն
 ՍԻՄ – Սահմանադրական իրավունք միություն

Lilit Zakaryan

PhD in History, Associate Professor

Institute of History, NAS RA

lilitzakaryan66@gmail.com

THE PROCESS OF DRAFTING THE CONSTITUTION AND THE DEBATES ON THE MODEL OF STATE GOVERNANCE IN THE SUPREME COUNCIL OF ARMENIA (1990–1995)

Keywords: Constitution, presidential republic, parliamentary republic, Supreme Council, factions

This article analyzes the political and institutional processes within the Supreme Council that led to the adoption of the first constitution of the independent Republic of Armenia in 1995. The author examines key ideological and procedural conflicts that accompanied the constitutional drafting process during the years 1990–1995. Particular attention is given to the debate over the choice between presidential and parliamentary forms of government, as well as to the reasons behind the delayed adoption of the Basic Law.

Relying on materials from the National Archives of Armenia—namely, transcripts of Supreme Council sessions—and relevant scholarly literature, the article traces the evolution of political thinking and institutional preferences within the Armenian parliament.

The chronological scope of the study spans from the adoption of the Declaration of Independence in 1990 to the constitutional referendum held in 1995. Special focus is placed on internal parliamentary debates that reflect tensions between the demands for legitimacy, effective governance, and democratic participation. The article supplements earlier research by offering a more detailed exploration of the timeline, procedures, and institutional choices that had previously remained underexplored.

Лилит Закарян

кандидат исторических наук, доцент,

Институт истории НАН РА

lilitzakaryan66@gmail.com

ПРОЦЕСС РАЗРАБОТКИ КОНСТИТУЦИИ
И ДЕБАТЫ ВОКРУГ МОДЕЛИ ГОСУДАРСТВЕННОГО УПРАВЛЕНИЯ
В ВЕРХОВНОМ СОВЕТЕ АРМЕНИИ (1990–1995 ГГ.)

Ключевые слова: Конституция, президентская республика, парламентская республика, Верховный Совет, фракции

Статья посвящена анализу политических и институциональных процессов в Верховном Совете, приведших к принятию первой Конституции независимой Республики Армения в 1995 году. Автор исследует ключевые идеологические и процедурные конфликты, которые сопровождали процесс конституционного строительства в 1990–1995 гг. В центре внимания — проблема выбора между президентской и парламентской формами правления, а также причины задержки с принятием основного закона.

Опираясь на материалы Национального архива Армении — стенограммы заседаний Верховного Совета, а также на исследования, посвященные исследуемой теме, статья показывает, как эволюционировало политическое мышление и институциональные предпочтения в армянском парламенте.

Хронологические рамки охватывают период от принятия Декларации независимости в 1990 году до проведения конституционного референдума в 1995 году. В статье особое внимание уделяется обсуждениям внутри Верховного Совета, отражающим напряжение между требованиями легитимности, эффективного управления и демократического участия. Работа дополняет уже опубликованные исследования, углубляясь в вопросы сроков, процедур и институционального выбора, ранее оставшиеся вне фокуса.